CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
GOVERNOR

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

30.04.2024 N 11-03/321-24
Ձեր N

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
նախագահ Ալեն Սիմոնյանին

Մեծարգո պարոն Սիմոնյան

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2023 թվականի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր 8 թերթ:

Հարգանքով՝

Invalid signature

X

Signed by: GALSTYAN MARTIN 1405780029

Մարտին Գալստյան

Կատարող՝ Անուշ Գրիգորյան

Հեռ. 010592534

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2023թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հազ. դրամ	*Ծնթ*	*2023թ՝ նախահաշիվ*	*2023թ. կատարողական*	*Կատ. %*
Ապարատի պահպանման ծախսեր	**1**	**9,898,009**	**8,478,925**	**86%**
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	1.1	8,787,398	7,651,708	87%
Աշխատակիցների սոցիալական ապահովություն	1.2	492,320	385,498	78%
Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում	1.3	497,761	376,741	76%
Ներկայացուցչական ծախսեր	1.4	54,848	32,611	59%
Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում	1.5	65,682	32,367	49%
Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր	**2**	**55,463**	**32,495**	**59%**
Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր	**3**	**95,289**	**50,379**	**53%**
Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր	**4**	**23,472**	**21,707**	**92%**
Չնախատեսված ծախսեր		**20,000**	**-**	**0%**
Ընդամենը վարչական ծախսեր		**10,092,233**	**8,583,506**	**85%**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հազ. դրամ	**Ծնթ**	**2023թ. նախահաշիվ**	**2023թ. կատարողական**	***Կապ. %***
Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ	5	-	-	-
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կատարված ներդրումներ	6	1,911,696	1,031,770	54%
Ընդամենը կապիտալ ներդրումների ծրագիր		**1,911,696**	**1,031,770**	**54%**

2023թ. կատարողականին կից ծանոթագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) 2023թ. վարչական ծախսերը նախահաշվի նկատմամբ կատարվել են 85%-ով: 2023թ. ԿԲ վարչական ծախսերը փաստացի կազմել են 8,583,506 հազ. դրամ՝ նախատեսված 10,092,233 հազ. դրամի դիմաց: Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ վարչական ծախսերը ընդգրկում են ապարատի պահպանման, լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման, տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման և ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը, ինչպես նաև չնախատեսված ծախսեր:

1. Ապարատի պահպանման ծախսեր

Ապարատի պահպանման ծախսերը ընդգրկում են ԿԲ-ի անձնակազմի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և գործուղման, ներկայացուցչական, սոցիալական ապահովության, ինչպես նաև ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերը: 2023թ. ԿԲ ապարատի պահպանման ծախսերը նախահաշվի նկատմամբ կատարվել են 86%-ով: 2023թ.-ի փաստացի ծախսերը կազմել են 8,478,925 հազ. դրամ՝ նախատեսված 9,898,009 հազ. դրամի դիմաց:

1.1 Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ

Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկը կատարվել է՝ ելնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի ԿԲ աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին:
ԿԲ-ի ռազմավարությամբ ամրագրված թվային տրանսֆորմացիայի իրագործման և ԿԲ կարողությունների զարգացման համար պահանջվող մրցունակ ռեսուրսների ներգրավման նպատակով ԿԲ-ը 2023թ.-ին նախատեսել էր միջին աշխատավարձի աճ 20%-ով նախորդ տարվա համեմատ:
Աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների հաշվարկը իրականացվել է այդ լույսի ներքո՝ միաժամանակ պահպանելով ԿԲ-ի որդեգրած մոտեցումը. այն է՝ աստիճանաբար չեզոքացնել ԿԲ-ի և բանկային համակարգի միջին աշխատավարձերի միջև բացասական ճեղքվածքը: 2023թ. ԿԲ և բանկային համակարգի միջին աշխատավարձի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

	ԿԲ աշխատողների միջին թվաքանակ		**ԿԲ միջին ամսական աշխատավարձ**		**Բանկային համակարգի միջ. աշխատավարձ**		**ԿԲ միջին աշխ.-ի ճեղքվածքը բանկային համակարգի միջին աշխ.-ի նկատմամբ**
	Բյուջե	Փաստ.	Բյուջե	Փաստ.	Բյուջե	Փաստ.	Փաստ./Փաստ
2023	800	767	915 հազ.	831 հազ.	979 հազ.	1,070 հազ.	(22%)

Նշենք, որ 2023թ.-ին ԿԲ միջին աշխատավարձը ցածր է բանկային համակարգում ձևավորված միջին աշխատավարձից շուրջ 22%-ով՝ առավելապես ի հաշիվ բանկային համակարգի աշխատավարձերի՝ նախահաշվային ցուցանիշի համեմատ առաջանցիկ աճի:

1.2 Աշխատակիցների սոցիալական ապահովություն

Աշխատակիցների սոցիալական ապահովության ծախսերը նախատեսված են ԿԲ-ի անձնակազմի սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերը հոգալու համար: Սույն հոդվածի գծով կատարողականը 2023թ. կազմել է 385,498 հազ. դրամ՝ 78% նախահաշվի նկատմամբ:

1.3 Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում

Այս հոդվածի ներքո արտացոլվել են ԿԲ աշխատակիցների շարունակական ուսուցմանն ու զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների, փորձի փոխանակման նպատակով ուսուցողական այցերի, ինչպես նաև տարբեր միջազգային կառույցներում ԿԲ-ի ներկայացուցչություն ապահովելու համար անհրաժեշտ հանդիպումներին, համաժողովներին ԿԲ աշխատակիցների մասնակցության ծախսերը: 2023թ. այս հոդվածի գծով կատարողականը կազմել է 376,741 հազ. դրամ՝ 76% նախահաշվի նկատմամբ: Կատարողականի աճը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ պայմանավորված է արտասահմանյան գործուղումների և վերապատրաստումների աճով, ինչին նպաստել է COVID սահմանափակումների վերջնական դադարեցումը, ինչպես նաև աշխատակիցների հոսունության արդյունքում նոր ընդունվող աշխատակիցների ուսուցման և վերապատրաստումների իրականացումը: Գործուղման ծախսերի վրա ազդեցություն են ունեցել նաև ավիափոխադրման և կեցության ծախսերի թանկացումները:

1.4 Ներկայացուցչական ծախսեր

2023թ. ներկայացուցչական ծախսերի գծով կատարողականը կազմել է 32,611 հազ. դրամ՝ 59% նախահաշվի նկատմամբ: Կատարողականը առավելապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելությունների, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումների, բանակցությունների, գիտաժողովների և այլ աշխատանքային հանդիպումների կազմակերպմամբ:

1.5 Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում

2023թ.-ին այս հոդվածի գծով կատարողականը կազմել է 32,367 հազ. դրամ՝ 49% նախահաշվի նկատմամբ՝ նախորդ տարվա ծախսերի համեմատ նվազելով 19%-ով: 2023թ-ին 13%-ով նվազել են ծախսված վառելիքի ծավալները նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ՝ մասնակիորեն պայմանավորված ԿԲ-ի ավտոպարկում էլեկտրական ավտոմեքենաների համալրմամբ, ինչպես նաև 2023թ.-ին ծախսագրված վառելիքի միջին գինը շուրջ 24%-ով ցածր է եղել նախահաշվային գնից:

2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր

Այս հոդվածի ներքո պլանավորվել են ֆինանսական կրթման կազմակերպման և իրականացման նպատակով տարբեր բացատրական և գովազդային տեսահոլովակների նկարահանման, հասարակայնության հետ կապերի գծով, ամսագրերի և թերթերի բաժանորդագրության, մասնագիտական գրականության ձեռքբերման, տեղական և արտասահմանյան մամուլում հայտարարությունների տեղադրման, լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերման և այլ նմանատիպ ծախսերը: ԿԲ-ի կողմից մասնագիտական գրականության ձեռքբերումը և ֆինանսական ոլորտում մասնագիտացած և բարձր վարկանիշ ունեցող պարբերականների և էլեկտրոնային **գրադարանների բաժանորդագրությունը նպատակ ունի խթանելու ԿԲ աշխատակիցների մասնագիտական** գիտելիքների զարգացումը:

Ձեռքբերված մասնագիտական պարբերականները թվայնացվում և տեղադրվում են ԿԲ աշխատակիցների համար հասանելի ընդհանուր հարթակում: Մանրամասն բացվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝ ըստ առանձին ուղղությունների.

Հազ. դրամ	2023թ. Նախահաշիվ	2023թ. Փաստ
Հասարակայնության հետ կապերի գծով	18,000	15,613
Ամսագրերի և թերթերի բաժանորդագրություն և գրականության ձեռքբերում (այդ թվում՝ օնլայն)	24,963	13,143
Տեղեկատվության հրապարակում տեղական և արտասահմանյան մամուլում, լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերում, ֆիլմի և տեսահոլովակի նկարահանում	12,500	3,739
Ընդամենը	**55,463**	**32,495**

3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր

Սույն հոդվածի ներքո արտացոլվում են ԿԲ-ի վարչական շենքի և ԿԲ-ին պատկանող մյուս կառույցների բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական նյութերի ու արագամաշ առարկաների սպառման հետ կապված ծախսերը: 2023թ. այս հոդվածի գծով կատարողականը նախորդ տարվա համեմատ նվազել է 25%-ով՝ կազմելով 50,379 հազ. դրամ՝ 53% նախահաշվի նկատմամբ: Նվազումը հիմնականում պայմանավորված է հիգիենայի պարագաների ծախսերի նվազմամբ:

4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր

ԿԲ-ի հեռախոսային և ֆաքսիմիլային կապի անխափան աշխատանքը ապահովվում է ՀՀ-ում գործող առաջատար հեռահաղորդակցման ոլորտի կազմակերպությունների կողմից, որոնց հետ կնքված են համապատասխան պայմանագրեր և մատուցվող ծառայությունները որոշվում են ըստ սահմանված գնացուցակների: Սույն հոդվածի ներքո հաշվառվում են աբոնենտային վարձը, խոսելավարձերը, շենքերի պահպանության համար ուղիղ կապը: 2023թ. այս հոդվածի գծով կատարողականը նախորդ տարվա համեմատ աճել է 1%-ով՝ կազմելով 21,707 հազ. դրամ՝ 92% նախահաշվի նկատմամբ:

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

ԿԲ-ի 2023թ.-ի կապիտալ ներդրումների ծրագիրը կատարվել է 54%-ով՝ կատարողականը կազմել է 1,031,770 հազ. դրամ՝ նախահաշվային 1,911,696 հազ. դրամի դիմաց:

5. Կապիտալ ներդրումներ ԿԲ խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում

2023թ.-ին ՀՀ ԿԲ խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ չեն նախատեսվել:

6. Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանն ուղղված կապիտալ ներդրումները կազմել են 1,031,770 հազ. դրամ՝ արձանագրելով 54% կատարողական: 2023թ.-ին հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կատարված կապիտալ ներդրումների բացվածքը ներկայացված է ստորև աղյուսակում.

	2023թ.	**2023թ.**	
Հազ. դրամ	Նախահաշիվ	Կատարողական	%.
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որից՝	**1,911,696**	**1,031,770**	**54%**
Շենքերի և շինությունների կառուցում և կապիտալ վերանորոգում	255,000	122,785	48%
Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի, հիմնական միջոցների ձեռքբերում, կապիտալ վերանորոգում	1,516,696	825,741	54%
Տրանսպորտային միջոցներ	140,000	83,244	59%

2023թ.-ի բյուջեում ԿԲ-ը ռազմավարական նոր նախագծեր չի նախատեսել, սակայն իրենց իրականացման կարևորագույն փուլերում են գտնվել 2022թ.-ին մեկնարկած նախագծերը:

2023թ.-ին նախատեսված ձեռքբերումների հիմնական մասը ուղղված է եղել ԿԲ-ի ենթակառուցվածքի ընթացիկ պահպանմանը և բարոյապես ու ֆիզիկապես մաշվածի փոխարինմանը:

6.1 Շենքերի և շինությունների կառուցում և կապիտալ վերանորոգում

Սույն հոդվածի գծով գրանցվել է 122,785 հազ. դրամ կատարողական՝ կազմելով 48% նախահաշվի նկատմամբ:

2023թ.-ին իրականացվել են ԿԲ-ի էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացմանը միտված արևային պանելների տեղադրման նախագծի աշխատանքներ, որոնց գծով կատարողականը կազմել է 71,565 հազ. դրամ: Հարկ է նշել, որ արևային պանելների տեղադրման նախագիծը շարունակվելու է նաև 2024թ.-ին:

2023թ.-ին իրականացվել են ԿԲ-ի վարչական շենքի էլեկտրասնուցման և օդափոխության համակարգերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Նշենք, որ Էլեկտրասնուցման համակարգերի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում, գործընկեր կազմակերպության կողմից սարքավորումների մատակարարման խնդիրներով պայմանավորված, պայմանագրով նախատեսված աշխատանքների որոշ մասը տեղափոխվել է 2024թ.:

6.2 Համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում

2023թ. ընթացքում համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ու ոչ նյութական ակտիվների կատարողականը կազմել է 825,741 հազ. դրամ՝ 54% նախահաշվի նկատմամբ: Կատարողականի հիմնական մասը կազմել են ԿԲ-ի ենթակառուցվածքի ընթացիկ պահպանմանը և բարոյապես ու ֆիզիկապես մաշվածի փոխարինմանն ուղղված կապիտալ ներդրումները: Նշված կապիտալ ներդրումների գերակշիռ մասը՝ 650,688 հազ. դրամը (79%), կազմում են SS, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ենթակառուցվածքի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված ներդրումները, որոնք առանցքային են տեղեկատվական

անվտանգության արդի սպառնալիքներից պաշտպանության և ԿԲ-ի բնականոն գործունեության ապահովման համար:
2023թ.-ին ԿԲ ռազմավարական նախաձեռնությունների շրջանակում նախատեսված ԿԲ գործընթացների նկարագրման և կատարելագործման համակարգի ներդրման նախագծի մասով կատարողական չի գրանցվել՝ հայտարարված մրցույթում դիմորդի հայտը անբավարար գնահատվելու հետևանքով: Այս հանգամանքից ելնելով՝ սույն նախագծի համար 2024թ. բյուջեում նախատեսվել է 300,000 հազ. դրամ:

2023թ.-ին դրամագիտական արժեքների և կանխիկի կառավարման համակարգի ներդրման նախագիծն արդիականացվեց նոր պահանջների հիման վրա: Համակարգի ներդրման մասով գրանցվել է 24,697 հազ. դրամ կատարողական: Ակնկալվում է, որ սույն նախագիծը իր ավարտին կհասնի 2024թ.-ին:

Նոր բանկային ավտոմատացված համակարգի գծով 2023թ.-ին գումար չէր նախատեսվել՝ հաշվի առնելով գործընկերոջ հետ ընթացող բանակցությունները՝ արտաքին խորհրդատուի ներգրավմամբ: Ակնկալվում է, որ բանակցությունների վերջնական արդյունքի հիման վրա նախագիծը կստանա իր վերջնական վերաձևավորումը:

6.3 Տրանսպորտային միջոցների ձեռքբերում

2023թ-ի ընթացքում ԿԲ-ը, ծախսարդյունավետության բարձրացմանը միտված իր քաղաքականությունից ելնելով, ձեռք է բերել թվով 6 էլեկտրական ավտոմեքենա՝ բենզինային շարժիչով շահագործվող հին ավտոպարկի փոխարինման նպատակով: Նշենք, որ 2023թ. տարեվերջի դրությամբ ԿԲ-ում առկա է թվով 13 էլեկտրական ավտոմեքենա: